

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ-ի ռեկտոր, ք.գ.դ.

_____ Խաչատրյան Գ.Կ.

“_21_” ____03_____ 2013թ.

ԿԱՐԳ

«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման

Ընդունված է գիտխորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

“_07_” ____03_____ 2013թ.

I. Ընդհանուր դրույթներ

1. «Ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման» կարգով /այսուհետ Կարգ/ կարգավորվում են «Վանաձորի Յոլի. Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ ՄՈՒՅ/ ուսանողներին հեռացման (ազատման), վերականգնման գործընթացները:
2. Սույն կարգի մշակման իրավական հիմքերն են ՀՀ «Կրթության մասին» օրենքը, ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, ՀՀ Կրթության և Գիտության նախարարի 17.11.2011 թ. թիվ 1242-Ն «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» հրամանը:

II. Ուսանողների հեռացում, ազատում

3. Ուսանողը հեռացվում է ՄՈՒՅ-ից.
 1. ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում (բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերի),
 2. ՄՈՒՅ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում,
 3. ՄՈՒՅ-ի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում,
 4. պայմանագրային այլ պարտականությունները չկատարելու դեպքում:
4. Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ «անբավարար» գնահատական ստանալը:
5. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով ընդունված, սակայն ՄՈՒՅ-ից հեռացված ուսանողները զրկվում են տարկետման իրավունքից:
6. Ուսանողը ազատվում է ՄՈՒՅ-ից.
 1. իր դիմումի համաձայն,
 2. այլ բուհ տեղափոխվելու դեպքում:
7. ՄՈՒՅ-ից ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման համաձայն սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:
8. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.
 1. ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,
 2. առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,
 3. հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:
9. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

10. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումը իրականացվում է ռեկտորի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:
11. Սույն կարգի 3-րդ կետի 1. ենթակետով նախատեսված դեպքում, ՄՈՒՅ-ից հեռացման հրամանները տրվում են քննաչափի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:
12. ՄՈՒՅ-ից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան զինկոմիսարիատներ:
13. ՄՈՒՅ-ից հեռացման (ազատման) դեպքում ուսանողի դիմումի համաձայն, 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: ՄՈՒՅ-ի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:
14. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը, վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք: Վերահանձնման կամ կրկնման համար կազմվում է անհատական ժամանակացույց, որի մեկ օրինակը տրամադրվում է ուսանողին:
15. Սույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումը ունեցած կարգավիճակի պահպանմամբ:
16. Հեռացման, ազատման և ուսումնառության ընդհատման դեպքում տվյալ կիսամյակի վարձավճարը ուսանողին չի վերադարձվում:

III. Ուսանողների վերականգնումը

17. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:
18. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:

19. Հեռացված(ազատված) նախկին ուսանողը սահմանված ժամկետում դիմում է ներկայացնում ռեկտորին: Այլ բուհերից հեռացված(ազատված) ուսանողները դիմումին կցում են նաև ակադեմիական տեղեկանք, միջնակարգ կրթության ավարտական վկայականը:
20. Ուսանողի վերականգնման դիմումը քննարկվում է ռեկտորատի նիստում, որտեղ որոշվում է նրա ուսումնառության շարունակման կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորվում է մերժելու մասին որոշումը:
21. ՄՈՒՀ-ից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն 1 կիսամյակ հետո:
22. Ռեկտորատի դրական որոշումը դառնում է ռեկտորի հրամանի (կցագրման) հիմքը: Հրամանում նշվում են առաջացած առարկայական քննական տարբերությունները (ակադեմիական պարտք), վարձավճարը, առարկայական քննական տարբերությունների հանձնման ժամկետը /մինչև մեկ ամիս/:
23. Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:
24. Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 25 տոկոս և ավելի կրեդիտների տարբերությունը:
25. ՄՈՒՀ-ից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների գումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:
26. Ձորակոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ ուսումնառությունն ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից այն ընդհատել են՝ անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:
27. Ինստիտուտից հեռացված, ազատված ուսանողները վերականգնվում և շարունակում են ուսուցումը վճարովի սկզբունքով:
28. Անվճար սկզբունքով ուսումը կարող են շարունակել ՀՀ օրենքով սահմանված իրավունքներից օգտվող անձինք:
29. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ ուսումնառած և կրթաթոշակ ստացած ուսումնառությունն ընդհատած ուսանողը /սույն կարգի 8-րդ կետը/ վերականգնվելու դեպքում ուսումը շարունակում է նույն համակարգում: Իսկ վճարովի ուսուցմամբ ուսումնառած ուսանողի /սույն կարգի 8-րդ կետը/

վճարումներ կատարելու պայմանները որոշվում է ուսումնական հաստատության և ուսանողի կնքված պայմանագրի համաձայն:

30. Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողները կարող են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի» համաձայն մասնակցել փոխատեղման գործընթացին՝ առնվազն մեկ ուսումնական տարի ուսանելուց հետո:

31. ՄՈՒՀ-ից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի սահմաններում:

32. Եթե լիցենզիայով սահմանված տեղերը սահմանափակ են, անց է կացվում մրցույթ, որտեղ առաջնահերթությունը տրվում է.

ա. հայկական բանակում ծառայածներին,

բ. մասնագիտական առարկաներից նախկինում առավել բարձր միջին որակական գնահատական ունեցողներին

գ. ՄՈՒՀ-ից նախկինում ակադեմիական ցածր առաջադիմության պատճառով հեռացված ուսանողներին.

դ. գյուղական դպրոցներում աշխատող ուսուցիչներին /հեռակա ուսուցման համակարգում/

33. Սույն Կարգի 8-րդ կետով ուսումնառությունն ընդհատած ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են այն, անկախ լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի քանակից և առաջացած ծրագրային տարբերություններից:

34. ՄՈՒՀ-ի ռեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, ըստ տվյալ ՄՈՒՀ-ում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի: /Հավելված 1/

35. Դեկանատի և հաշվապահության կողմից լրացվում է տեղեկանք /հավելված 2/, որտեղ սահմանվում են ուսումնասիրվող առարկաները, կրեդիտները և վերականգնման կիսամյակի վարձավճարը: Տեղեկանքին ծանոթանալու վերաբերյալ նշագրում է կատարում նաև ուսանողը: Տեղեկանքը համարվում է հիմնական հրամանի հիմք:

36. Կցագրված ուսանողին թույլատրվում է մասնակցել համապատասխան խմբի ակադեմիական ուսումնական պարապմունքներին:

37. Ըստ մասնագիտությունների չհավատարմագրված բուհերից հեռացված (ազատված) ուսանողների վերականգնումը չի թույլատրվում:

38. Վերականգնված ուսանողի անձնական գործուն պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, ՍՈՒՅ-ի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, ուսման վարձի վճարման անդորրագիրը:
39. Սահմանված ժամանակացույցով առարկայական տարբերությունները հանձնելուց, պայմանագիրը կնքելուց, տվյալ կիսամյակի վարձավճարը մուծելուց հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:
40. Սույն կարգի 8-րդ կետով ուսումնառությունն ընդհատած ուսանողի ուսումը շարունակելու դեպքում նույն մասնագիտությամբ համապատասխան կուրս չլինելու պատճառով, նրա համաձայնությամբ, կատարվում է հրամանագրում հարակից մասնագիտությամբ:
41. Դեկանատի կողմից ուսանողին տրվում է նոր ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:
42. Կցագրման հրամանով սահմանված գործառույթները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում այդ հրամանը չեղյալ է ճանաչվում:

Տվյալ մասնագիտության և կուրսի համար մեկ կրեդիտի արժեքը որոշվում է.

1.առկա ուսուցման համակարգում.

ա. ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաներ» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ», «Ընդհանուր առողջապահական առարկաներ» բլոկների /Ա խումբ/ առարկաների համար.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔԸ} = \frac{\text{Վ միջին}}{60}$$

$$\text{Վ միջին} = \frac{\text{Առկա ուսուցման համակարգի համար լիցենզիայով հաստատված տեղերի քանակով վերջին ուսումնական տարվա համար հաստատված առկա բաժինների ուսման վճարների չափով սպասվելիք գումարը}}{\text{Առկա ուսուցման համակարգի տվյալ ուսումնական տարվա հայտարարված մասնագիտությունների համար լիցենզիայով հաստատված տեղերի ընդհանուր քանակը}}$$

որտեղ`

60-ը` 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

բ. ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ» և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների /Բ խումբ/ առարկաների և «Այլ բաղադրիչներ» 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔԸ} = \frac{\text{Տ Վ}}{60}$$

որտեղ`

ՏՎ-ն` Տարեկան Վարձն է` համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի
60-ը` 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

2.հեռակա ուսուցման համակարգում.

ա)ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաներ» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ» բլոկների /Ա խումբ/առարկաների համար.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔԸ} = \frac{\text{Վ միջին}}{48}$$

$$\text{Վ միջին} = \frac{\text{Հեռակա ուսուցման համակարգի համար լիցենզիայով հաստատված տեղերի քանակով վերջին ուսումնական տարվա համար հաստատված առկա բաժինների ուսման վճարների չափով սպասվելիք գումարը}}{\text{Հեռակա ուսուցման համակարգի տվյալ ուսումնական տարվա հայտարարված մասնագիտությունների համար լիցենզիայով հաստատված տեղերի ընդհանուր քանակը}}$$

որտեղ`

48-ը` 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

բ) ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ»
 և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների /Բ խումբ/ առարկաների և
 «Այլ բաղադրիչներ» 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔ} = \frac{ՏՎ}{48}$$

որտեղ՝

ՏՎ-ն՝ Տարեկան Վարձն է՝ համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի
 48-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

Հավելված 2

ՏԵՂԵԿԱԼՔ

**201 - 201 ուս. տարվա _____ կիսամյակում
 ուսումնասիրվող առարկաների և վարձավճարի վերաբերյալ**

_____ մասնագիտության _____ ուսուցման
/մասնագիտության անվանումը/ /առկա, հեռակա/

համակարգի _____ կուրսում 2012թ. թիվ _____ հրամանով վերականգնված և
/կուրսը/ /հրամանի համարը/

կցագրված ուսանող _____ - ը
/անունը, հայրանունը, ազգանունը/

201 -201 ուս. տարվա _____ կիսամյակում պետք է ուսումնասիրի ներքոհիշյալ
 առարկաները.

Հ/հ	Ուսումնասիրվող առարկաները	Առարկան ըստ ուսումնական պլանի բլոկների	մտկերի
		<ul style="list-style-type: none"> • «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկա» /Ա/ • «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկա» /Ա/ • «Ընդհանուր առողջապահական առարկա» /Բ/ • «Ընդհանուր մասնագիտական առարկա» /Բ/ • «Հատուկ մասնագիտական առարկա» /Բ/ • «Այլ բաղադրիչ» /Բ/ 	

_____ ֆակուլտետի ղեկավար _____ / _____ /
/ստորագրություն/ /անունը, ազգանունը/

- ի 2012թ. թիվ _____

/ Ուսանող անունը, հայրանունը, ազգանունը/

հրամանով սահմանված _____ դրամ վարձավճարից 201 _____ -201 _____ ուս.

տարվա _____ կիսամյակում պետք է վճարի _____ դրամ*:

Նախկին պարտք _____ դրամ

Ընդամենը _____ դրամ

Գլխավոր հաշվապահ _____ / _____ /
/ստորագրություն/ /անունը, ազգանունը/

Տեղեկացված եմ** _____ / _____ /
/ստորագրություն/ /Ուսանող անունը, հայրանունը, ազգանունը/

Ծանոթություն.*Վերականգնման կիսամյակի վարձավճարը սահմանվում է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման(ազատման) և վերականգնման» կարգի /Կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրաման/ 5-րդ կետի համաձայն:

**Հաջորդ կիսամյակների վարձավճարը սահմանվում է վերականգնման հրամանով և պայմանագրով: